# Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: Սևրի պայմանագիրը

### Հայկական պատվիրակությունները Փարիզում: Հայկական հարցը և Հայաստանի մանդատի խնդիրը

Առաջին աշխարհամարտում պարտված երկրների՝ Գերմանիայի, Բուլղարիայի, Թուրքիայի, Ավստրո-Հունգարիայի հետ հաշտության պայմանագրեր կնքելու, պատերազմի արդյունքներն ամփոփելու և հետպատերազմյան խաղաղության պայմանները որոշելու նպատակով 1919 թ. սկզբին Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովում քննարկվեց նաև Հայկական հարցը:

ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի առաջարկով դաշնակից տերությունների ղեկավարները նախապես որոշել էին այդ վեհաժողովը հրավիրել 1918 թ. դեկտեմբերի 18-ին Փարիզում, սակայն վեհաժողովի անցկացումը մեկ ամսով հետաձգվեց: Ակնկալվում էր, որ մինչ այդ Ռուսաստանում կտապալվի խորհրդային իշխանությունը, և Ռուսաստանը դաշնակցի իրավունքով կմասնակցի վեհաժողովին:

Ռուսաստանում խորհրդային իշխանության տապալումը, սակայն, տեղի չունեցավ, և



վեհաժողովն իր աշխատանքներն սկսեց դաշնակից մեծ տերություններից մեկի՝ Ռուսաստանի բացակայությամբ: Թեև վերջինս չէր հրավիրվել, բայց Ռուսաստանի նկատմամբ ունեցած վախը թևածում էր Փարիզի վեհաժողովում: Վեհաժողովի գլխավոր մասնակիցների մոտ մեծ շփոթ էր առաջացրել խորհրդային Ռուսաստանի կառավարության 1917 թ. նոյեմբերի 8-ի խաղաղության մասին հրովարտակը (դեկրետը), որով չեղյալ էին հայտարարվել ցարական և ժամանակավոր կառավարությունների բոլոր գաղտնի պայմանագրերը, հատկապես Օսմանյան Թուրքիայի բաժանում նախատեսող Սայքս-Պիկոյի 1916 թ. համաձայնագիրը: Դաշնակիցներին հատկապես մտահոգում էր սևծովյան նեղուցների կարգավիճակը: Սայքս-Պիկոյի համաձայնագրով Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան, որոնց հետագայում միացել էր նաև Իտալիան, համաձայնել էին, որ սևծովյան նեղուցները տրվեն Ռուսաստանին, և պաշտպանվեն Անգլիայի ու Ֆրանսիայի հատուկ շահերը: Սակայն Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան այլևս դեմ էին նեղուցները Ռուսաստանին տալուն: 1918 թ. հունվարի 5-ին Լլոյդ Ջորջը հանդես եկավ հայտարարությամբ, որ Միջերկրական և Սև ծովերը միացնող նեղուցները պետք է միջազգայնացվեն[302]: Նա այն կարծիքին էր, որ դրանով իսկ մեծ տերությունների միջև այդ կապակցությամբ գոյություն ունեցող հակասությունները կվերանան:

Փարիզի վեհաժողովն իր աշխատանքները սկսեց 1919 թ. հունվարի 18-ին և ընդմիջումներով շարունակվեց մինչև 1920 թ. հունվարի 21-ը: Մասնակցում էին 27 երկրների մոտ 2 հազար պատվիրակներ: Վեհաժողովը բացեց Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեն: Պաշտոնական լեզուներ ճանաչվեցին ֆրանսերենը և անգլերենը: Վեհաժողովում նախագահում էր Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն: Վեհաժողովի ղեկավարությունը սկզբից պաշտոնապես ստանձնել էր Տասի խորհուրդը, որը կազմված էր հինգ խոշոր տերությունների երկուական ներկայացուցիչներից: Մարտի 25-ից այն բաժանվեց երկու խմբի՝ Չորսի խորհրդի (Վ. Վիլսոն, Լ. Ջորջ, Ժ. Կլեմանսո, Վ. Օռլանդո) և Հինգի խորհրդի (որի մեջ մտնում էին մեծ տերությունների արտգործնախարարները՝ Ռ. Լանսինգ, Ա. Բալֆուր, Ս. Պիշոն, Ջ. Սոննինո, Ն. Մակինո): Վճռական դերը պատկանում էր Չորսի խորհրդին, որի նիստերին վեհաժողովին մասնակից պետությունների ներկայացուցիչները հրավիրվում էին միայն այն ժամանակ, երբ քննարկվում էին նրանց վերաբերող հարցեր: Այսպիսով՝ վեհաժողովի ղեկավարությունը, փաստորեն, կենտրոնացվել էր չորս տերությունների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա) ղեկավարների ձեռքում: Սակայն դա չէր նշանակում, թե պայքարն ընթանում էր միայն նրանց միջև: Պայքարի էին ելել վեհաժողովի բոլոր մասնակիցները, որպեսզի աշխարհի վերաբաժանումից ստանան իրենց բաժինը: Պարտված տերությունների հետ պայմանագրերի նախագծերը մշակելիս դաշնակիցներն առաջին պլան էին մղում նոր կազմավորվող պետությունների, այդ թվում նաև Հայաստանի պահանջների քննարկումը:

Դաշնակիցներին մտահոգող սևծովյան նեղուցների խնդիրը սերտորեն առնչվում էր Արևմտյան Հայաստանի հարցին, և այդ կապակցությամբ խորհրդաժողովում ծագեց սևծովյան նեղուցների և Արևմտյան Հայաստանի միացյալ մանդատ (հովանավորություն) սահմանելու հարցը: Լ. Ջորջի կողմից առաջ քաշված այդ առաջարկը պաշտպանեց ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը:

1919 թ. հունվարի 30-ին Փարիզում տեղի ունեցած ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչների խորհրդակցությունում որոշում ընդունվեց, որ Փարիզի վեհաժողովի նպատակն է Թուրքական կայսրության որոշ տարածքներ, այդ թվում Հայաստանը (Ներառյալ Կիլիկիան) դնել առանձին պետու-

[302] Տե՛ս Джордж Л., Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, էջ 388:

թյունների հովանավորության ներքո, որոնք պետք է գործեին որպես Ազգերի լիգայի մանդատատերներ: Այդ որոշման 2–րդ կետում մասնավորապես նշվում է. «Մի շարք պատճառներով և հատկապես սուբյեկտ հանդիսացող ժողովուրդների Թուրքերի կողմից պատմականորեն սխալ կառավարման և վերջին տարիներին հայերի և այլոց սարսափելի կոտորածների պատճառով դաշնակից և միացյալ տերությունները համաձայն են, որ Հայաստանը (և այլ տարածքներ – խմբ.) պետք է ամբողջապես անջատվեն Թուրքական կայսրությունից...»[323]:

Հայաստանի Հանրապետությունը վեհաժողովին մասնակցելու պաշտոնական հրավեր թեև չէր ստացել, սակայն ոգևորված էր այն հույսով, որ դաշնակիցների համար հայերի թափած արյունը կգնահատվի, և Արևմտյան Հայաստանը վերջապես ձեռք կբերի իր ազատությունն ու անկախությունը: Հայ ժողովուրդը դրա իրավունքը ձեռք էր բերել Առաջին համաշխարհային պատերազմում դաշնակից տերությունների հետ իր ռազմական համագործակցության շնորհիվ: Միայն ռուսական բանակի շարքերում հայ մարտիկների թվաքանակն անցնում էր 200 հազար մարդուց, հազարավոր հայեր մարտնչում էին դաշնակից տերությունների բանակներում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու արևմտահայերը պատվիրակություններ ուղարկեցին Փարիզ: Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմը հաստատվել էր կառավարության 1918 թ. դեկտեմբերի 5–ի նիստում, իսկ կառավարության դեկտեմբերի 7–ի նիստում պատվիրակության համար կազմվեցին և հաստատվեցին մանրամասն հրահանգներ: Պատվիրակության կազմում էին Ա. Ահարոնյանը (նախագահ), Մ. Պապաջանյանը և Հ. Օհանջանյանը: Արևմտահայերի պատվիրակությունը ղեկավարում էր եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան: Պատվիրակության կազմում էին Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը և ուրիշներ:

Փարիզում հայկական պատվիրակներն անջատ հանդիպումներ ունեցան տարբեր երկրների դիվանագիտական առանձին ներկայացուցիչների հետ, սակայն վեհաժողովը Հայաստանի պատվիրակներին «չէր շտապում նկատել»: Բայց «չնկատելը» ևս քաղաքականություն էր և ուներ իր պատճառները: Բանն այն է, որ դաշնակից տերությունները դեռևս չէին կորցրել հույսը Ռուսաստանի այն ուժերի նկատմամբ, որոնք ձգտում էին տապալել խորհրդային կարգերը և վերականգնելու «մեծ ու անբաժան Ռուսաստանը»: Ռուսական նախկին կայսրության փլատակների վրա ստեղծված հանրապետությունների կառավարություններին ճանաչելը և նրանց հետ հաշվի նստելը կարող էին վանել այդ ուժերին: Այդ պատճառով էլ նպատակահարմար չհամարվեց ազգային կառավարությունների ներկայացուցիչներին պաշտոնապես վեհաժողով թողնելը:

Այդ կապակցությամբ գաղութահայերը բողոքի ձայն բարձրացրին: 1919 թ. հունվարի 26–ին Փարիզի հայկական եկեղեցում տեղի ունեցավ բազմամարդ ժողով, որը ղեկավարում էր Ա. Չոպանյանը: Ժողովը Ֆրանսիայի հայության անունից բողոքեց աղաղակող անարդարության դեմ: Հայերի համար հասկանալի չէր, թե պատերազմում դաշնակիցների խմբավորման մեջ գտնված և գերմանական խմբավորման դեմ քաջաբար մարտնչած հայերի ներկայացուցիչներն ինչու էին զրկվել վեհաժողովին մասնակցելու իրավունքից: Դաշնակից տերությունների այդ քաղաքականության դեմ հայերի բողոքի ցույցեր տեղի ունեցան նաև Շվեյցարիայում, Անգլիայում, Իտալիայում, Բելգիայում և Եվրոպայի այլ երկրներում:

Հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու, Հայաստանի անկախությունը ճանա-

[323] Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conferance 1919, Vol. XII, p. 745–746.



չելու կոչով այդ ժամանակ Փարիզում գտնվող ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին դիմեց Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն՝ հայտնելով 1919 թ. փետրվարի 11–ին ընդունած իր որոշումը: «Հայաստանը,– նշվում էր փաստաթղթում,– ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթները, Կիլիկիան, Տրապիզոնի ծովափը և Ռուսական Հայաստանը պետք է կազմեն առանձին անկախ պետություն»:

Այս որոշումը, որի տակ ստորագրել էին ՀԱԱԿ նախագահ Ջեյմս Ջերարդը, սենատոր Ջոն Վիլյամսը և ուրիշներ, ուղարկվել էր նաև Փարիզի խաղաղության խորհրդաժողովին, Լոնդոնում և Փարիզում գտնվող ամերիկյան դեսպանություններին: Համանման որոշումներ էին ընդունել ԱՄՆ սենատը (1919 թ. հունվարի 22–ին) և ներկայացուցիչների պալատը (1919 թ. հունվարի 31–ին)[324]:

Փարիզի վեհաժողովում հայկական հարցի քննարկումը ճիշտ հունի մեջ դնելուն որոշակիորեն խանգարում էին սկզբունքային հարցի նկատմամբ Պողոս Նուբար փաշայի և Ա. Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունների տարակարծությունները, որոնց հրապարակայնություն էր հաղորդում Պողոս Նուբար փաշան: Նա գտնում էր, որ «Արարատյան Հանրապետության» պատվիրակությունն ընդհանրապես չպետք է զբաղվի Հայ դատով, իսկ լավագույն դեպքում Ա. Ահարոնյանը պետք է ենթարկվի իրեն: Փարիզի խորհրդաժողովին փոխանակ ներկայացվեր երկու պատվիրակությունների միացյալ կարծիքը Հայ դատի խնդրով, Պողոս Նուբար փաշան իր ուշադրությունը կենտրոնացրել էր այն հարցի վրա, թե երկրի որ մասը պետք է միացվի մյուս մասին, ով ում պետք է ենթարկվի, ապագա խորհրդարանում քանի ներկայացուցիչ պետք է ունենան արևմտահայերն ու արևելահայերը, ով պետք է լինի վարչապետ, ովքեր՝ նախարարներ: Նա հեգնանքով էր մոտենում Հայաստանի Հանրապետության խորհրդարանին, իրավական չհամարելով վերջինիս ընտրությունը: «Արարատյան Հանրապետության» հարցը զուտ ռուսական համարելով՝ նա պնդում էր, որ Թուրքահայոց դատով պետք է զբաղվի միայն իր գլխավորած «համազգային» պատվիրակությունը: Ցավալի էր, որ այդ տարակարծությունները դառնում էին այլ տերությունների քննարկման առարկա:

Ապագա Հայաստանի տարածքների վերաբերյալ տարակարծություններ կային ոչ միայն հայկական երկու պատվիրակությունների, այլև այդ պատվիրակությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև: Այդ ամենը խիստ բացասական հետևանքներ ունեցավ:

1919 թ. փետրվարի 12–ին Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը և Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, վիճաբանություններից հետո Փարիզի վեհաժողովին ներկայացնելու համար ստորագրեցին հայկական ազգային պահանջները պարունակող հուշագիր:

Ըստ այդ հուշագրի՝ մեծ տերություններից պահանջվում էր հայկական անկախ պետությունը, որը կազմված էր լինելու Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթներից (Վան, Բաղեշ, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Կարին և Տրապիզոն), բացառությամբ Դիարբեքիրի հարավային և Սեբաստիայի արևմտյան շրջանների: Միացյալ Հայաստանի մեջ ներառվելու էին Կիլիկիայի չորս սանջակները (Մարաշ, Սիս, Ջեբել Բերեքեթ և Ադանա), Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով (Երևանի նահանգն ամբողջությամբ, Կարսի շրջանն առանց Արդահանի հյուսիսային մասի, Թիֆլիսի նահանգի հարավային կեսը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը):

Հուշագիրը պահանջում էր. ա) նշված տարածքներից հեռացնել Թուրքական զորքե-

[324] Տե՛ս The National Archives of the USA (Washington). Microcopy 820, Roll. 541, Vol. 515, Armenia (pt), 867. 00/57:

*րը, բ) կատարել բնակչության ընդհանուր գնահատում, գ) պատժել հայերի ջարդերի և նրանց ունեցվածքի թալանի մասնակիցներին, դ) երկրից վտարել ըմբոստ ցեղերին, ե) մուհաճիրներին (մահմեդական գաղթականներ), որոնք Աբդուլ Համիդի և երիտթուրքերի վարչակարգերի ժամանակ գաղթեցվել էին Արևմտյան Հայաստան, վերադարձնել իրենց վայրերը, զ) միջոցներ ձեռնարկել բռնի կրոնափոխ եղածներին իրենց կրոնին վերադարձնելու ուղղությամբ և այլն: Թուրքիան հատուցելու էր հայերին հասցրած վնասները՝ նրանց վերադարձնելով իրենց կալվածքները, անշարժ գույքը, եկեղեցիներն ու վանքերը, դպրոցները և այլն[325]:*

*Թուրքական իշխանությունների կողմից հայերին հասցված նյութական վնասի ամբողջական գումարը, ըստ 1919 թ. փետրվար–ապրիլին Փարիզում տեղի ունեցած Հայոց ազգային համագումարի տվյալների, կազմում էր 19 միլիարդ 130 միլիոն 982 հազար ֆրանկ, այդ թվում 14 միլիարդ 598 միլիոն 510 հազարը՝ «արեւմտեան հայոց պահանջներուն», և մնացյալ 4 միլիարդ 532 միլիոն 472 հազարը՝ «արևելյան հայոց պահանջներուն» համար[326]:*

*Անդրադառնալով փետրվարի 12–ի հուշագրին՝ Հ. Քաջազնունին նշել է. «Որտեղի՞ց ծնունդ առաւ աշխարհակալական այդ ապշեցուցիչ պահանջը»: Ո՛չ Հայաստանի կառավարությունը և ո՛չ էլ պետական կյանքին ուղղություն տվող ՀՅԴ–ն «մտքով անգամ չէին անցկացրել այդպիսի ցնորամիտ, տղայական ծրագիր»: «Ծովից ծով» Հայաստան ստեղծելու պահանջը, նշել է Հ. Քաջազնունին, Պողոս Նուբարի պատվիրակության պահանջն է եղել, իսկ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը «տարւեց գաղութներում տիրող հոսանքով, ենթարկւեց դրսի ազդեցութիւններին ու թոյլ տւեց աճարեկելու իրան, մի բան, որ այնքան ծանօթ է մեզ:*

*Պատուիրակութեանն ասել էին, որ եթէ չպահանջի այդ հրապուրիչ սահմանները, թուրքահայերը (յանձինս Ազգային պատուիրակութեան) կ'անջատեն իրանց դատը «Արարատեան» հանրապետութեան դատից ու մեզանից անկախ դիմում կ'անեն պետութիւններին... Իսկ Հայաստանի կառավարութիւնը իր անունից ներկայացրած պահանջի մասին տեղեկութիւն ստացաւ երկու թէ երեք շաբաթ յետոյ միայն»[327]:*

*Հայաստանի Հանրապետության պատվիրակության և Պողոս Նուբար փաշայի պատվիրակության միջև տարաձայնությունները գնալով խորանում էին, նրանց միջև տեղի ունեցող տհաճ վիճաբանությունների փաստին բազմիցս անդրադարձել է Ա. Ահարոնյանը: 1919 թ. ապրիլի 24–ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ս. Տիգրանյանին գրած նամակում Ա. Ահարոնյանը նշում է. «Պողոս փաշան իր պատվիրակությանը ուժ տալու և ժողովրդական սանկցիա ստանալու համար որոշած է եղել այս տարվա սկզբին համազգային համագումար հրավիրել Փարիզում: Եվ նույնիսկ հաշվի չառնելով Հայաստանի Հանրապետության գոյության փաստը՝ հրավեր է ղրկել «Ռուսահայությանը՝ ուղարկել ութ ներկայացուցիչ այդ համագումարին մասնակցելու»: Այս հրավերից անմիջապես հետո (Փարիզ – խմբ.) հասավ մեր պատվիրակությունը (փետրվարի 3–ին), և ընդհանուր ծրագիրը խախտվեց: Մենք հայտարարեցինք, որ մեր կառավարությունը մեզ ուղարկել է ոչ թե որևէ համագումարի մասնակցելու, և այն էլ պատվիրակություն ընտրելու համար, այլ մենք արդեն իսկ պատվիրակություն ենք կազմակերպված հայ պետության»:*

*Փետրվարին Փարիզում կայացած այդ համագումարը տևեց շուրջ երկու ամիս (1919 թ. փետրվարի 24–ից ապրիլի 22–ը): Համագումարի աշխատանքներին մասնակ-*

[325] Տե՛ս Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ, Բոստոն, 1919:
[326] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 271:
[327] Քաջազնունի Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 49–50:



*ցում էին Եգիպտոսի, Բուլղարիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Իտալիայի, Ռումինիայի, Հունաստանի, ԱՄՆ–ի, Անգլիայի և այլ երկրների հայկական համայնքների, ինչպես նաև Կովկասում ապաստան գտած արևմտահայ գաղթականների ներկայացուցիչները: Համագումարը հավանություն տվեց դեռևս 1918 թ. նոյեմբերի 30–ին Փարիզում Պողոս Նուբար փաշայի հայտարարությանը «Ամբողջական Հայաստանի անկախության» մասին և դրա հիման վրա նրա կազմած «դահլիճին»: Համագումարն «ընտրեց իր ազգային պատվիրակությունը, հրահանգելով նրան մեզ հետ համերաշխ գործել բոլոր ազգային խնդիրներում», «պետք էր հաշտվել այս իրողության հետ՝ պառակտումից խույս տալու համար»,– գրում է Ա. Ահարոնյանը:*

*Հաշվի առնելով միջազգային դիվանագիտության առջև միասնական Հայաստանի անունից հանդես գալու խիստ անհրաժեշտությունը՝ Ա. Ահարոնյանն ՀՀ կառավարությանը խորհուրդ է տալիս «Երևանում գլուխ հանել միացյալ Հայաստանի միացյալ կառավարություն ու պառլամենտ՝ համաձայնելով տեղվույդ արևմտահայ խորհրդի հետ...»[328]:*

*Հայաստանի Հանրապետության ձայնը Փարիզի վեհաժողովում ավելի լսելի դարձնելու, ինչպես նաև Պողոս Նուբար փաշայի անջատողական քաղաքականության առաջն առնելու նպատակով 1919 թ. մայիսի 28–ին՝ Հայաստանի անկախության հռչակման առաջին տարեդարձի օրը, ինչպես արդեն նշվել է, Հայաստանի կառավարությունը հրապարակեց միացյալ և անկախ Հայաստանի անկախության հռչակագիրը՝ մեկ պետության մեջ միավորված հայտարարելով «Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող պապենական հայկական երկրները»: Դրան կանխավ իր հավանությունն էր տվել 1919 թ. փետրվարին Երևանում կայացած արևմտահայերի երկրորդ համագումարը:*

*«Ամբողջական Հայաստանի» անկախությունը հռչակելու որոշման մասին Փարիզում գտնվող Հայաստանի պատվիրակությունը շատ ուշ իմացավ մամուլից: Ա. Ահարոնյանը 1919 թ. օգոստոսի 7–ին Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանին գրած նամակում հաղորդում է, որ դեռևս փետրվարին Փարիզում տեղի ունեցած «ազգային համագումարում» Պողոս Նուբար փաշան մերժել էր Հայաստանի Հանրապետության կառավարությունը ճանաչել որպես «ամբողջական Հայաստանի միակ կառավարություն», որին պետք է ենթարկվեին հայկական երկու պատվիրակությունները՝ որպես մեկ պատվիրակություն:*

*Ինչպես հաղորդում է Ա. Ահարոնյանը, Պողոս Նուբար փաշան «դիմումներ է արել» օտար տերություններին՝ իր գլխավորած պատվիրակությունն իբրև Հայաստանի կառավարություն ճանաչելու խնդրանքով: Եվ երբ նրան հայտնի է դարձել միացյալ և անկախ Հայաստանի հռչակագիրը, նա հայտարարել է, «թե ինքը և իր պատվիրակությունը հրապարակավ և այն էլ օտար կառավարությունների հեռագրական միջոցներով բողոքելու է այդ ակտի դեմ»: Հայաստանի Հանրապետության կառավարությանը հղած հեռագրում Պողոս Նուբար փաշան նշում է. «Ազգային պատգամավորությունն անընդունելի է գտնում այն պայմանները, որի մեջ Երևանում հայտարարվել է մայիսի 28–ի ակտը»: Պողոս Նուբարի կողմնակիցները պահանջում էին, որ «նոր կառավարության նախարարապետը պիտի լինի թրքահայ և հատկապես Պողոս փաշան, որը պահելու է նաև միացյալ ու միակ պատվիրակության նախագահությունը»[329]:*

*Իսկ 1919 թ. օգոստոսի 8–ին Ա. Խատիսյանին գրած նամակում Ա. Ահարոնյանը նշում է. «Երբ նա (Պողոս Նուբար փաշան – խմբ.) զգում է, որ իշխանությունը ձեռքից*

[328] Դաշնակցական կառավարութեան դոկումենտներից, I, Ա. Ահարոնեանի զեկույց–նամակները Ալ. Մարտունու առաջաբանով, Երևան, 1922, էջ 10,13:
[329] Նույն տեղում, էջ 18–20:

գնում է, ընդունակ է ամենավատ արարքների, մինչև հանցանք: Ահա թե ինչու միակ ելքը մենք նկատում ենք, այս դրությունից դուրս գալու, համաձայնության մեջ է՝ այս չափ վտանգավոր ծերունու հետ...»[330]: Ա. Ահարոնյանը համաձայն էր, որ ստեղծվի միացյալ պատվիրակություն Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, միայն թե կանխվեն նրա պառակտիչ քայլերը:

Անշուշտ, հայկական դիվանագիտությունը Փարիզի վեհաժողովում կարող էր շոշափելի արդյունքների հասնել միայն այն դեպքում, եթե գործեր միասնաբար և ունենար ռազմավարական ու մարտավարական ճիշտ դիրքորոշում:

1919 թ. փետրվարի 25-ին Տասի խորհուրդը վերջապես լսեց հայկական երկու պատվիրակությունների նախագահներին և ընդունեց հայկական պահանջների հուշագիրը՝ Միացյալ Հայաստանի քարտեզով:

* * *

1919 թ. գարնանը Փարիզի վեհաժողովը հավանություն տվեց «Թուրքիայում մանդատատեր երկրների միջազգային հանձնաժողով» ստեղծելու գաղափարին: Վերջինս պետք է ուսումնասիրեր և համապատասխան առաջարկներ ներկայացներ Փարիզի խորհրդաժողովին՝ Օսմանյան կայսրությունից անջատվելիք երկրամասերի վիճակի մասին:

1919 թ. մարտի 20-ին Չորսի խորհուրդը քննարկեց Հայկական հարցը: Հայաստանի համար որպես մանդատատեր երկիր ցանկալի էր համարվում ԱՄՆ-ը, քանի որ դրան ձգտում էին իրենք՝ հայերը: Ենթադրվում էր, որ թուրքերը ևս, չնայած դեմ էին անջատ Հայաստանի ստեղծմանը, բայց, երբ այն փաստ դառնար, կգերադասեին որպես մանդատատեր երկիր տեսնել ԱՄՆ-ը[331]: Չորսի խորհրդի մայիսի 14-ի նիստում որոշվում է Հայաստանի նկատմամբ մանդատը հանձնել ԱՄՆ-ին, միաժամանակ ԱՄՆ-ի նախագահը համաձայնում է մանդատ ընդունել Կ. Պոլսի, սևծովյան նեղուցների, Մարմարի ծովի և մերձակա տարածքների նկատմամբ:

Սակայն Հայաստանի մանդատը վերցնելուց առաջ ԱՄՆ-ը նախ և առաջ պետք է ճանաչեր նրա անկախությունը: Նման խնդրանքով Հայաստանի խորհուրդը 1919 թ. փետրվարի 4-ին և 23-ին դիմել էր ԱՄՆ կառավարությանը: Սակայն ԱՄՆ կոնգրեսը չէր շտապում ճանաչել Հայաստանի անկախությունը՝ դա կապելով Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքման և Հայաստանի սահմանների որոշման հարցի հետ:

1919 թ. ընթացքում մեծ տերությունները չմարող հետաքրքրություն էին ցուցաբերում Հայաստանի մանդատի նկատմամբ՝ ծանրութեթև անելով, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ մանդատը վերցնելը կամ դրանից հրաժարվելն իրենց միջազգային դիրքերի ամրապնդման խնդրում: Այդ հաշվարկներն էլ, վերջին հաշվով, կանխորոշելու էին Արևմտյան Հայաստանին անկախություն տալու և Հայաստանի մանդատի խնդրի լուծումը:

1919 թ. հունիսի 25-ին՝ Փարիզում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի առանձնատանը տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում է Լ. Ջորջը, Ժ. Կլեմանսոն, Ջ. Սոնինոն (Իտալիա), բարոն Ն. Մակինոն (Ճապոնիա), Վ. Վիլսոնն այն կարծիքն է հայտնել, թե դաշնակիցների զորքերը պետք է մնան Թուրքիայից անջատվող բոլոր տարածքներում, մինչև վերջնականապես կկարգավորվեն նրանց հարցերը: Հայաստանին անկախություն տալու գաղափարը վաղուց էր համակել նախագահ Վ. Վիլսոնին:

330 Նույն տեղում, էջ 24:

331 Տես Papers Relating ..., Vol. XII, էջ 819, 820:



Դեռևս 1917 թ. հունիսին նա գրել է. «Երբ ավարտվի պատերազմը, կան երկու երկրներ, որոնք երբեք չեն վերադարձվի մահմեդական լծի տակ: Մեկը քրիստոնյա Հայաստանն է, մյուսը՝ Պաղեստինը»[332]: Այնուհանդերձ, խորհրդակցությունում որոշվում է Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի հարցի լուծումը հետաձգել, մինչև ԱՄՆ-ի կառավարությունը կորոշի, թե ի վիճակի է արդյոք ընդունելու թուրքական նախկին կայսրության որևէ մասի մանդատը:

Անտանտի տերությունների արևելյան քաղաքականության հիմնադրույթները զարգացում գտան Կ. Պոլսից և Փոքր Ասիայից մինչև Հայաստան և Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան նախագծում: Դրանք մարմնավորվեցին երկու ուշագրավ և կարևոր դիվանագիտական փաստաթղթերում, որոնցից մեկը Թուրքիայում ԱՄՆ լիազորներ Չարլզ Քրեյնի և Հենրի Քինգի՝ 1919 թ. օգոստոսի 28-ին Փարիզի խորհրդաժողովին և Վ. Վիլսոնին[333], իսկ մյուսը՝ ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության հոկտեմբերի 16-ին պետդեպարտամենտին, այնուհետև սենատին ներկայացրած զեկուցագրերն են[334]:

Չ. Քրեյնի ու Հ. Քինգի, այնուհետև Ջ. Հարբորդի առաքելությունների նպատակը Կ. Պոլսի, սևծովյան նեղուցների և Հայաստանի մանդատի հարցերն ուսումնասիրելն ու դրանց նոր լուծումներ առաջարկելն էր: Այս հարցերը հետաքրքրում էին հաղթող մեծ տերություններին, որովհետև նրանցից յուրաքանչյուրը փլուզվող կայսրությունում ուներ պատմական, քաղաքական, կրոնական, ֆինանսական, տարածքային և այլ շահեր: Իսկ դրանք անընդհատ բախվում էին իրար՝ առաջացնելով միջպետական լարված մրցակցություն: Ռուսաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան այլևս անթույլատրելի էին համարում Կ. Պոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաստանին հանձնելը: Նրանց համար ընդունելի էր Լ. Ջորջի առաջարկը, որով, ինչպես արդեն նշվել է, նախատեսվում էր միջազգայնացնել Բոսֆորի և Դարդանելի նեղուցները: Նկատի առնելով, որ դրանց խնդիրը սերտորեն առնչվում էր Արևմտյան Հայաստանի խնդրին, առաջադրվեց սևծովյան նեղուցների և Արևմտյան Հայաստանի համար միասնական մանդատ կամ հովանավորություն սահմանելու հարցը: Ընդ որում՝ առաջարկվում էր միասնական մանդատը հանձնել մեկ և ոչ թե երկու կամ մի քանի պետության, քանի որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների միջազգային վերահսկողության՝ 1878 թ. Բեռլինի վեհաժողովում սահմանված սկզբունքն իրեն չէր արդարացրել: Եվ դաշնակիցների ընտրությունն ընկավ ԱՄՆ վրա՝ ելնելով երկու նկատառումներից: Նախ՝ ԱՄՆ-ը տարածքային ու ռազմավարական շահագրգռվածություն չուներ և անշահախնդիր վերահսկողություն կարող էր հաստատել նեղուցների վրա, և երկրորդ՝ մեծ տերություններն անհրաժեշտ էին համարում Արևելքի երկրներում տարածել ամերիկյան ժողովրդավարության օրինակելի սկզբունքներն ու չափանիշները: Նախատեսվող մանդատի տակ վերցվելիք տարածքները համակողմանիորեն ուսումնասիրելու նպատակով 1919 թ. հունիսի 10-ին Թուրքիա մեկնեցին ԱՄՆ ներկայացուցիչներ Չ. Քրեյնը և Հ. Քինգը՝ որպես Փարիզի վեհաժողովի լիազորներ: Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան նպատակահարմար չգտան անդամակցել այդ հանձնաժողովին:

332 Public Record Office (London), FO 371/4962, p. 116.

333 Զեկուցագրի Հայաստանին վերաբերող հատվածի բովանդակությունն ամբողջությամբ տե՛ս Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Vol. XII, Washington, 1947, էջ 802–848:

334 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 6ա, թ. 1–40: Տե՛ս նաև Papers Relating..., Vol. II, Washington, 1934, էջ 841–874: Ջ.Հարբորդի զեկուցագիրը 1919 և 1920 թթ. տպագրվել է Վաշինգտոնում Maj. General James G. Herbord, Conditions in the Near East: Report of the American Military Mission to Armenia, Washington, 1920:

1919 թ. օգոստոսի 28-ին ամերիկացի գործիչներն իրենց առաքելության արդյունքների, եզրակացությունների և առաջարկների վերաբերյալ զեկուցագիր ներկայացրին Փարիզի վեհաժողովին և Վ. Վիլսոնին: Զեկուցագրի 3-րդ և 4-րդ բաժինները նվիրված էին Թուրքիայի ասիական տարածքներին: Դրանցում Հ. Քինգը և Չ. Քրեյնը բնական էին համարում ամբողջ Հայաստանի անջատումը Թուրքական կայսրությունից: Բայց, ելնելով այն իրողությունից, որ 1894–1896, 1908–1909 և 1915–1916 թթ. «սարսափելի կոտորածներից» հետո Հայաստանում հայերը փոքրամասնություն էին դարձել այլ ժողովուրդների մեծամասնության համեմատ, անհնարին էր համարվում ծովից ծով անկախ Հայաստանի ստեղծումը: Դա կլիներ հայ փոքրամասնության տիրապետություն այլ ժողովուրդների մեծամասնության վրա, ինչը կառաջացներ վերջիններիս ընդդիմությունը՝ հայերին դնելով անապահով ու անպաշտպան դրության մեջ: Հ. Քինգը և Չ. Քրեյնն առաջարկում էին հայկական պետությունը ստեղծել մի այնպիսի տարածքում, որտեղ երաշխավորված լիներ հայերի ազատությունը թուրքերի գերիշխանությունից: Որպես այդպիսին՝ նկատի էին առնվում Հայաստանի Հանրապետությունը և պատերազմի ժամանակ ռուսների կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքը, որոնց ելք էր տրվելու դեպի Սև ծով: Այդ տարածքներում պետք է կենտրոնացվեին հայերը, իսկ մահմեդական բնակչությունն այնտեղից աստիճանաբար դուրս էր բերվելու: Նշվում էր, որ այդ սահմաններում Հայաստանի ստեղծման դեմ թուրքերն ու քրդերն այլևս չէին կարող բողոքել, քանի որ այդ դեպքում, ըստ նրանց, Հայաստանի տարածքն ավելի մեծ չէր լինելու, քան «պատմական Հայաստանը»: Բացի այդ, նշված տարածքից հեշտությամբ կիրագործվեր թուրքերի ու քրդերի արտագաղթը, քան շատ ավելի ընդարձակ տարածքից: Չափավոր տարածքում հայերը կարճ ժամանակում կարող էին մեծամասնություն կազմել և հասնել ինքնակառավարման: Ընդ որում՝ մանդատատեր պետության վերահսկողությունը, ըստ նախագծի հեղինակների, շարունակվելու էր այնքան ժամանակ, մինչև հայերը բացարձակ մեծամասնություն կազմեին Հայաստանի սահմաններում և պատրաստ լինեին ինքնակառավարման ու ինքնապաշտպանության:

Հ. Քինգի և Չ. Քրեյնի առաջարկությունների ընդունման դեպքում Փոքր Ասիայում կհաստատվեր միայն ԱՄՆ գերիշխանությունը: Այդ էր պատճառը, որ Փարիզի վեհաժողովում նրանց զեկուցագիրը դիվանագիտական քննարկումների առարկա չդարձավ: Բացի այդ, նշված փաստաթուղթը պատասխան չէր տալիս ԱՄՆ նախագահին հուզող բոլոր հարցերին: Ուստի Հայաստանի մանդատին առնչվող հարցերը համակողմանի ուսումնասիրելու և կոնգրեսին համապատասխան զեկուցագիր ներկայացնելու համար Վ. Վիլսոնի որոշմամբ 1919 թ. սեպտեմբերին Անդրկովկաս և Փոքր Ասիա գործուղվեց ամերիկյան նոր բազմանդամ պատվիրակություն՝ գեներալ Ջ. Հարբորդի գլխավորությամբ:

ԱՄՆ նախագահը պատվիրակության առջև խնդիր էր դրել ուսումնասիրելու նաև տարածաշրջանում ԱՄՆ շահերը շոշափող քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ կարգի խնդիրներ: ԱՄՆ պետական դեպարտամենտի հանձնարարությամբ տարածաշրջանում գտնվող ամերիկյան բոլոր կարգի ներկայացուցիչներն ամեն կերպ օգնելու էին գեներալ Ջ. Հարբորդի առաքելության գործունեությանը:

1919 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին առաքելությունը, որի կազմում ընդգրկված էին ամերիկյան բանակի երեք գեներալներ, բազմաթիվ բարձրաստիճան այլ զինվորականներ, պատմաբաններ, տնտեսագետներ, ռազմական հետախուզության ներկայացուցիչներ, դիվանագետներ թարգմանիչներ և ուրիշներ, 30 օր շրջագայեց Փոքր Ասիայում և Անդրկովկասում, մասնավորապես Կ. Պոլսում, Կիլիկիայում, Սիրիայում, Արևմտյան Հայաստանի նահանգներում, եղավ Կարսում, Սարիղամիշում, Երևանում, Էջմիածնում (որտեղ հանդիպում ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հետ),



Թիֆլիսում, Բաթումում և այլ քաղաքներում ու վայրերում: Ջ. Հարբորդի խնդրանքով Հայաստանի կառավարությունը կազմել էր ընդարձակ զեկուցագիր, որում պատասխան էր տրվել ամերիկացիներին հետաքրքրող 40 հարցի:

Վերադարձի ճանապարհին գեներալ Ջ. Հարբորդը Փարիզում հանդիպումներ ունեցավ այնտեղ գտնվող Անդրկովկասի հանրապետությունների պատվիրակությունների անդամների, Փարիզի վեհաժողովի կողմից Անդրկովկաս ուղարկված ներկայացուցիչների հետ: Հանձնախմբի անդամները հարկ համարեցին լսել նաև «1915 թ. գազանությունների վկաներին»[335]:

Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագիրը 1919 թ. հոկտեմբերի 16-ին ներկայացվեց պետդեպարտամենտին, այնուհետև՝ սենատին: Զեկուցագրում առաջարկվում էր Կ. Պոլիսը, Փոքր Ասիան, Հայաստանը և Անդրկովկասը միավորել ԱՄՆ-ի երկարաժամկետ հովանավորության ներքո: Ընդ որում, Հայաստանի և Անդրկովկասի համար սահմանված էր մեկ ընդհանուր մանդատ, որը տրվելու էր ԱՄՆ-ին: Անդրկովկասի վրա միասնական մանդատի հաստատման անհրաժեշտությունը բացատրվում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախության վաղաժամ լինելու հանգամանքով, այդ հանրապետությունների տարաձայնություններով ու հակասություններով:

Ջ. Հարբորդի առաքելությունը երկու նկատառումներով դեմ էր Օսմանյան կայսրությունից անկախ Հայաստանի ստեղծմանը: Նախ՝ Հայաստանի տարածքում, որտեղ թուրքերը կոտորել էին ավելի քան մեկ միլիոն հայերի, մեծամասնություն կկազմեր մահմեդական բնակչությունը, եթե նույնիսկ հայ գաղթականներն աշխարհի բոլոր ծայրերից վերադառնային իրենց բնակավայրերը: Առաքելությունը գտնում էր նաև, որ հայերի լարված հարաբերությունները թուրքերի ու քրդերի հետ կարող էին հանգեցնել նոր՝ չդադարող կոտորածների:

Ըստ զեկուցագրի՝ միասնական մանդատով կազմավորվող պետությունների ժողովուրդները պետք է լինեին թուրքերը, թաթարները, հայերը և վրացիները: Հանձնախումբն այդ ընդարձակ տարածքի մանդատը ոչ թե երկու կամ երեք, այլ մեկ պետության հանձնելը հիմնավորում էր նրանով, որ միասնական մանդատի դեպքում հայերը և թուրքերը, որոնց միջև անխուսափելի էին խանդն ու ատելությունը, կլինեին հարևաններ և ոչ թե հակառակորդներ:

Առաքելությունը պնդում էր, որ միասնական մանդատն Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի համար ամենաճիշտ տնտեսական որոշումն էր՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքի ընդգրկմամբ: Փաստորեն, Ջ. Հարբորդի պատվիրակության նախագիծը ոչ միայն թուրքանպաստ էր, այլև Հ. Քինգի և Չ. Քրեյնի նախագծի համեմատ՝ ավելի հակահայկական: Կ. Պոլիսը, սևծովյան նեղուցները, ողջ Փոքր Ասիան, Հայաստանը և Անդրկովկասը մեկ պետության մանդատի մեջ միավորելը նշանակում էր պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, վերացնել Հայաստանն իբրև պատնեշ համաթյուրքականության ճանապարհին, ուղղակիորեն նպաստել Թուրքիայի ու Կովկասի մահմեդական և թյուրքալեզու ժողովուրդների միջև անմիջական կապի ստեղծմանը, թուրանական պետության ձևավորմանը, պայմաններ ստեղծել, որ թուրքերը դառնան երկրի գլխավոր տերերը և մանդատի ժամկետն ավարտվելուց հետո շարունակեն հայերի բնաջնջման քաղաքականությունը: Պատահական չէ, որ Մ. Քեմալը պաշտպանում էր միասնական մանդատի գաղափարը՝ կեղծ հայտարարություններ անելով, թե ամերիկյան հովանավորության ներքո «հայերի դեմ Թուրքիայում նոր բռնություններ տեղի չեն ունենա»: Նա փորձում էր ամերիկացիներին հավատացնել, թե թուրքական ազգայնա-

[335] Տես Congressional Record, Vol. LXIV, part. 3, էջ 2497:

կան չարժումը «Թչնամական հակում չունի Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որի կենտրոնը Երևանն է»: Այդ ձևակերպումը Թուրք գործչի կողմից խորամանկ ակնարկ էր՝ ընդգծելու, որ իր գլխավորած շարժումն այլ Հայաստան չի ճանաչում: Փաստորեն Մ. Քեմալը պնդում էր, որ Թուրքիայի սահմաններում գոյություն չեն ունեցել ո՛չ Արևմտյան Հայաստան, ո՛չ էլ Հայկական հարց:

Այսպիսով՝ Կ. Պոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագիրն, ըստ էության, նման էր «Կովկասյան տուն» Թուրքական ծրագրին: Երկուսն էլ սպառնալիք էին հայ ժողովրդի ու Հայաստանի համար: Չձևակերպված լինելով տարբեր ժամանակներում, քաղաքական տարբեր պայմաններում և հակադիր ռազմաքաղաքական խմբավորումներում գտնվող պետությունների կողմից՝ դրանք գրեթե համընկնում էին հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրի հարցում: Թե՛ ԱՄՆ վիլսոնյան քաղաքականությունը և թե՛ Անգլիայի ու Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը հեռու էին հայերի ազգային շահերը, ձգտումներն ու արդարացի պահանջները պաշտպանելուց, թեև չաղախված էին ճնշված ժողովուրդների ազատագրության և ազգերի ինքնորոշման առաջադեմ ու համարձակ գաղափարներով:

* * *

1919 թ. խոր աշնանը դաշնակից տերությունները լուրջ քննարկման խնդիր դարձրին Անդրկովկասի հանրապետությունները ճանաչելու հարցը: Իրադրությունն Անդրկովկասում փոխվում էր ժամ առ ժամ: 1920 թ. հունվարի 10-ին Փարիզում Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի վարչապետներն ու արտգործնախարարները ԱՄՆ և Ճապոնիայի դեսպանների ներկայությամբ քննարկեցին Անդրկովկասում տիրող իրավիճակի հարցը: Լ. Ջորջը տագնապով էր խոսում դեպի Անդրկովկաս բոլշևիկյան ուժերի առաջխաղացման մասին, վախ էր հայտնում, որ Ա. Դենիկինի պարտությունից հետո բոլշևիկները կարող են վտանգ սպառնալ կովկասյան կառավարություններին, որ բոլշևիկներին կարող են միանալ Թուրքերը: Այդ վտանգի առաջն առնելու համար նա առաջարկում էր ռազմական օգնություն կազմակերպել Անդրկովկասի հանրապետություններին: Որոշում ընդունվեց, որ «անհրաժեշտ է օգնել կովկասյան պետություններին ընդդեմ բոլշևիկների...»[336]: Հանձնարարվեց արտգործնախարարներին իրենց կառավարությունների անունից հայտարարել Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների ճանաչումը: Ինչ վերաբերում էր Հայաստանի Հանրապետության ճանաչմանը, ապա դաշնակից տերությունները հարցը կապում էին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի և բոլշևիկների դեմ պայքարի՝ Հայաստանի վճռականության դրսևորման հետ:

Այնուհանդերձ, 1920 թ. հունվարի 19-ին Փարիզում տեղի ունեցած ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների նիստում որոշվեց ճանաչել նաև Հայաստանի կառավարությունը՝ «այն պայմանով, որ այդ ճանաչումը չի կարող կանխորոշել այդ պետության վերջնական սահմանների հարցը»[337]: Հունվարի 23-ին Անգլիայի արտգործնախարար լորդ Ջ. Քերզոնը Գերագույն խորհրդի այդ որոշման մասին հեռագրեց Հայաստանի կառավարությանը:

Հայաստանում ճիշտ էր ընկալվել այդ ճանաչման քաղաքական նպատակը: «Նույնիսկ մեր անկախութեան ճանաչումը Փարիզի Գերագոյն Խորհրդի կողմից,- գրել է Ա. Խատիսյանը ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին 1920 թ. փետրվարի 6-ին,- մեզ թւում է նրանց կողմից իբրեւ մի միջոց բոլշեւիզմի դէմ կռուելու համար: Այս միտքը

336 Documents on British Foreign Policy..., Vol. II, 1919, p. 724, 725.

337 Papers Relating... The Paris Peace Conference. 1919, Vol. IX, p. 898–902, Documents on British Foreign Policy..., Vol. III, p. 768.



մեզ թելադրում է այն պայմաններից, որոնց մէջ տեղի ունեցաւ այդ յայտարարութիւնը: Մենք տեսնեցինք այդ հանդիսաւոր կերպով (Երևանում Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումը նշվեց 101 թնդանոթային համազարկով – խմբ.), բայց այդ տօնը թունաւորւում էր Թիւրքահայաստանի դրութեամբ»[338]:

Տասնամյակներ տևած ջարդերի ու կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանը հայաթափ էր եղել, իսկ նոր-նոր ոտքի կանգնող Հայաստանի Հանրապետությունը չուներ այն ռազմական ուժը, որով հնարավոր լիներ ապահովել գոնե գաղթականների վերադարձը և սահմանների պաշտպանությունը:

Այդ ամենից անկախ՝ դաշնակից տերություններից և ոչ մեկը ձգտում հանդես չբերեց հայերին իրական օգնություն կազմակերպելու խնդրում:

338 Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 199:

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 142-153: